

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ  
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

# ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 2 (72)  
2016 թ.

Գլխավոր խմբագիր՝  
Ի.գ.թ., պրոֆ. Լևոն Օհանյան

Հիմնադիր և հրատարակիչ՝  
ՀՀ իրավաբանների միություն,  
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ

## Խ մ բ ա գ ր ա կ ա ն խ ո Ր Ի Ո Ւ Ր Պ

Սամվել Դիլբանդյան -

Ի.գ.դ., գլխավոր խմբագրի տեղակալ

Կարեն Գևորգյան -

Ի.գ.թ., գլխավոր խմբագրի տեղակալ

Աշոտ Պետրոսյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - Ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - Ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - Ի.գ.դ.

Դավիթ Ավետիսյան - Ի.գ.թ.

Արթուր Վաղարշյան - Ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - Ի.գ.դ.

Վիգեն Քոչարյան - Ի.գ.թ.

Խմբագրության հասցեն՝

ՀՀ, 0025 Երևան,

Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ

իրավագիտության ֆակուլտետ:

Հեռ. 060-71-02-47

Էլ. կայք՝

[http://ysu.am/faculties/hy/Law/  
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

Խմբագրությունը կարող է  
հրապարակել նյութեր՝ համամիտ

չլինելով հեղինակների  
տեսակետներին:

12 համակարգչային էջից ավելի

չպատվիրված նյութերը չեն

ընդունվում:

e-mail: [a\\_petrosyan@ysu.am](mailto:a_petrosyan@ysu.am)

Դասիչ՝ 77771

Տպագրական 13.5 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

4.05.2016

Հանձնված է տպագրության

20.06.2016

СОЮЗ ЮРИСТОВ РА  
ЮРИДИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ ЕГУ

# ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 2 (72)

2016 г.

Главный редактор:  
к.ю.н., проф. Левон Оганян

Учредитель и издатель:  
Союз Юристов РА,  
Юридический факультет ЕГУ

## Редакционный совет

Самвел Дилбандян -

д.ю.н., зам. главного редактора

Карен Геворгян -

к.ю.н., зам. главного редактора

Ашот Петросян -

ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Давид Аветисян - к.ю.н.

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - д.ю.н.

Виген Кочарян - к.ю.н.

Адрес редакции:  
РА, 0025 Ереван,  
ул. Алека Манукяна 1,  
юридический факультет ЕГУ.  
Тел.: 060-71-02-47  
e-mail: a\_petrosyan@ysu.am  
web: [http://ysu.am/faculties/hy/Law/  
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

13.5 усл. печ. л.

Тираж: 500

Сдано в набор 04.05.2016

Подписано к печати 20.06.2016

«Պետություն և իրավունք» գիտական հանդեսի սույն համարը նվիրված է վաստակաշատ դատավարագետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ վաստակավար իրավաբան *Ալեքսանդր Բորիսի Սոլովյովի* ծննդյան 80-ամյակին

Данный номер научного журнала “Государство и право” посвящен 80-летию юбилею известного процессуалиста, доктора юридических наук, профессора, Заслуженного юриста РФ *Александра Борисовича Соловьева*

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲՈՐԻՍԻ ՍՈՒՈՎՅՈՎԻՆ ԵՊՀ ՈՍԿԵ ՄԵԴԱՈՎ  
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՐԱՄԱՆ ..... 8

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՆԸ ..... 9

ԽՈՍՔ ՈՒՍՈՒՑՉԻՆ ..... 10

Ալեքսանդր Վոլկոդ

«ՄԵՎ, ԲԱՅՑ ԱՆՄԱՐ ԿԻՐՔ» (ՊՐՈՖԵՍՈՐ Ա.Բ. ՍՈՒՈՎՅՈՎԻ ԾՆՆԴՅԱՆ  
80-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ) ..... 25

Ալեքսանդր Սոլովյով

ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՈՂ ԵՎ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԵՐՈՒՄ  
ԱՊԱՀՈՎԵԼ ՏՈՒԺՈՂԻ ԵՎ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ 38

Գազիկ Ղազինյան, Անի Դանիելյան

ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ԴԱՏԱԿԱՆ  
ՎԵՐԱՀՍՎՈՂՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ..... 53

Լեոնիդ Գոլովկո

ՈՒՒՍԱԿԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ  
ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈՐՈՇ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ..... 63

Սամվել Դիլբանյան, Նարեկ Մինասյան

ՈՐՊԵՍ ՄԵՂԱԴՐՅԱԼ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ ..... 65

Արման Թաթոյան

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ ԵՎ ԴՐԱ  
ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ..... 101

Անատոլի Վլասով

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ  
ՈՐՈՇ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ..... 109

Գազիկ Ղազինյան, Տաթևիկ Սուջյան

ՕՐԵՆՔԻ ՄԻԱՏԵՍԱԿ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ  
ՎՃՈՒԲԵԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ (ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ  
ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԸ) ..... 120

Մարիա Զյաբլինա

ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԵՎ ԿԱՍԿԱԾՅԱԼԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ  
ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՈՂ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ ..... 127

Հրայր Դուկասյան, Անահիտ Հարությունյան

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՍԱՆԿՑԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ  
ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ ..... 128

Դավիթ Ավետիսյան

ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԱՍՆԱՎՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ԳՈՐԾԵՐՈՎ՝ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍՊՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ ..... 141

Տատյանա Ռյաբինինա, Դմիտրի Ալիմով

ԱՌԵՐԵՍՄԱՆ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ-ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԻՃԱՀԱՐՈՒՅՑ ՀԱՐՑԵՐԸ ..... 159

Սերգեյ Մարաբյան

ՈՐՈՇ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ..... 160

Վահե Ենգիբարյան, Արթուր Զախոյան

ՔՆՆԻՉԻ ԵՎ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿՑԻ ՓՈԽԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԻ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԱԿՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 174

Դավիթ Խաչատուրյան

ԱՐԴԱՐԱՑՄԱՆ ԴԱՏԱՎՃՈՒ ԻՄԱՑԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԴԱՏԱԿԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԹՈՂ..... 203

Արմեն Հովհաննիսյան

ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ..... 204

## СОДЕРЖАНИЕ

ПРИКАЗ О НАГРАЖДЕНИИ АЛЕКСАНДРА БОРИСОВИЧА СОЛОВЬЕВА ЗОЛОТОЙ МЕДАЛЬЮ ЕГУ .....	8
НАШ ЮБИЛЯР .....	9
СЛОВО УЧИТЕЛЮ.....	10
Александр Волеводз	
«ОДНА, НО ПЛАМЕННАЯ СТРАСТЬ» (К 80-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ ПРОФЕССОРА АЛЕКСАНДРА БОРИСОВИЧА СОЛОВЬЕВА).....	11
Александр Соловьев	
НЕОБХОДИМО ОБЕСПЕЧИТЬ ПАРИТЕТНОСТЬ ПРАВ ПОТЕРПЕВШЕГО И ОБВИНЯЕМОГО В УПК РФ И РА .....	26
Гагик Казинян, Ани Даниелян	
О НЕКОТОРЫХ ПРОБЛЕМАХ СУДЕБНОГО КОНТРОЛЯ В ОТНОШЕНИИ ОПЕРАТИВНО-РОЗЫСКНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ.....	39
Леонид Головкин	
ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ РОССИЙСКОГО ПРЕДВАРИТЕЛЬНОГО СЛЕДСТВИЯ В КОНТЕКСТЕ НЕКОТОРЫХ НОВЕЙШИХ ИНИЦИАТИВ НА ПОСТСОВЕТСКОМ ПРОСТРАНСТВЕ .....	55
Самвел Дилбандян, Нарек Минасян	
НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ИНСТИТУТА ПРИВЛЕЧЕНИЯ В КАЧЕСТВЕ ОБВИНЯЕМОГО .....	74
Арман Татоян	
ПРОЦЕССУАЛЬНАЯ ФУНКЦИЯ УГОЛОВНОГО ПРЕСЛЕДОВАНИЯ И ЕЕ СООТНОШЕНИЕ С РАССЛЕДОВАНИЕМ ДЕЛА .....	76
Анатолий Власов	
НЕКОТОРЫЕ ТЕОРЕТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ РЕАЛИЗАЦИИ ЗАДАЧ СОВРЕМЕННОГО СУДОПРОИЗВОДСТВА .....	102
Гагик Казинян, Татевик Суджян	
ФУНКЦИЯ ОБЕСПЕЧЕНИЯ ЕДИНООБРАЗНОГО ПРИМЕНЕНИЯ ЗАКОНА В РАМКАХ КАССАЦИИ (ПРАВОВАЯ СУЩНОСТЬ И МЕХАНИЗМ ОСУЩЕСТВЛЕНИЯ) .....	110
Мария Зяблина	
ОБЕСПЕЧЕНИЕ ПРАВ И ЗАКОННЫХ ИНТЕРЕСОВ ОБВИНЯЕМОГО И ПОДОЗРЕВАЕМОГО ПО УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОМУ КОДЕКСУ РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ.....	121
Граир Гукасян, Анаит Арутюнян	
ОСОБЕННОСТИ ПРИМЕНЕНИЯ ПРОЦЕССУАЛЬНЫХ САНКЦИЙ ПО ПРОЕКТУ УПК РА.....	139

Давид Аветисян

ПРОБЛЕМЫ ПРИМЕНЕНИЯ МЕР ПРЕСЕЧЕНИЯ ПО ДЕЛАМ ЧАСТНОГО  
ОБВИНЕНИЯ ПО ПРОЕКТУ НОВОГО УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОГО КОДЕКСА  
РА..... 145

Татьяна Рябинина, Дмитрий Алымов

ПРОБЛЕМНЫЕ ВОПРОСЫ УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОГО РЕГУЛИРОВАНИЯ  
И ТАКТИКО-КРИМИНАЛИСТИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ ПРОИЗВОДСТВА  
ОЧНОЙ СТАВКИ..... 147

Сергей Марабян

НЕКОТОРЫЕ СООБРАЖЕНИЯ ОТНОСИТЕЛЬНО ИЗМЕНЕНИЯ  
ТЕРРИТОРИАЛЬНОЙ ПОДСУДНОСТИ УГОЛОВНЫХ ДЕЛ..... 171

Ваге Енгибарян , Артур Чахоян

УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНЫЕ И ОРГАНИЗАЦИОННО-ТАКТИЧЕСКИЕ  
ОСОБЕННОСТИ ФОРМ ВЗАИМОДЕЙСТВИЯ СЛЕДОВАТЕЛЯ С СОТРУДНИКОМ  
ОРГАНА ДОЗНАНИЯ..... 185

Давид Хачатурян

ГНОСЕОЛОГИЧЕСКИЕ ОСНОВЫ ОПРАВДАТЕЛЬНОГО ПРИГОВОРА КАК МЕТОД  
ОПРЕДЕЛЕНИЯ ПРЕДМЕТА СУДЕБНОГО ПОЗНАНИЯ..... 187

Армен Оганесян

ПРОБЛЕМЫ, ВОЗНИКАЮЩИЕ НА ЭТАПЕ ПРЕДВАРИТЕЛЬНОГО  
ПРОИЗВОДСТВА ПО ПЕРЕСМОТРУ ОКОНЧАТЕЛЬНОГО СУДЕБНОГО АКТА ПО  
ВНОВЬ ОТКРЫВШИМСЯ ОБСТОЯТЕЛЬСТВАМ ..... 213

## ՈՐՊԵՏ ՄԵՂԱԴՐՅԱԼ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

### Սամվել Դիլբանդյան

ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ,  
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (e-mail: iravdilbandyan@rambler.ru)

### Նարեկ Մինասյան

ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչության  
ծառայողական քննության բաժնի տեսուչ (e-mail: narek-mkrtchyan90@mail.ru)

«Որպես մեղադրյալ ներգրավել» հասկացությունը հաճախ ներկայացվում է իբրև դատավարական ակտ, որն առաջացնում է որոշակի իրավունքներ ու պարտականություններ մի կողմից՝ քրեական հետապնդում իրականացնող մարմնի, մյուս կողմից՝ մեղադրյալի միջև: Ենթադրյալ հանցանք կատարած անձը մեղադրյալի կարգավիճակ ձեռք է բերում մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը կայացնելու պահից: Չնայած օրենսդրական հստակ կարգավորմանը՝ դատավարական գրականության մեջ և պրակտիկայում անձի մեղադրյալի կարգավիճակ ստանալու պահը միանշանակ չի ընկալվում: Որոշ դատավարագետներ այն կարծիքին են, որ մեղադրյալ ներգրավելու մասին որոշում կայացնելը դեռևս լիարժեք չէ, քանի դեռ մեղադրանք չի առաջադրվել<sup>1</sup>: Իհարկե, անձին մեղադրյալ ներգրավելու մասին որոշում կայացնելով՝ նշված ինստիտուտի իրացումը չի սպառվում: Մեղադրյալը որպես դատավարության սուբյեկտ, իրական դատավարական հարաբերությունների մեջ է մտնում իրեն մեղադրանք առաջադրելուց հետո, երբ նրան հայտնի են դառնում օրենքով նախատեսված իր դատավարական իրավունքներն ու պարտականությունները: Վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի այդ որոշումը ստորագրելուց հետո ենթադրյալ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառել դատավարական հարկադրանքի միջոցներ, օրինակ՝ հայտարարել հետախուզում կամ որպես խափանման միջոց ընտրել կալանքը և այլն: Այս հանգամանքը վկայում է այն մասին, որ որպես մեղադրյալ ներգրավելը հանգեցնում է ծանր հետևանքների, և քննիչը անձին որպես մեղադրյալ պետք է ներգրավի միայն դրա համար օրենքով նախատեսված բավարար հիմքերի առկայության դեպքում: Քննիչի համար հստակ պետք է լինի հիմնավոր կասկածի առկայությունը, այսինքն՝ տվյալ անձի կողմից ենթադրյալ հանցանքը կատարած լինելու հանգամանքը, հակառակ դեպքում անձին մեղադրյալի կարգավիճակում դնելը կլինի անհիմն, որը կարող է նաև հանգեցնել վարույթն իրականացնող մարմնին քրեական պատասխանատվության ենթարկելու:

Վարույթն իրականացնող մարմնի՝ անձին մեղադրյալ ներգրավելու մասին գործողությունն իր արտացոլումն է ստանում համպատասխան դատավարական որոշման մեջ: Քրեադատավարական գործունեության մասնակիցների դատավարական

<sup>1</sup> Տե՛ս Կոլբեևա Մ. Ю. Институт привлечения лица в качестве обвиняемого в условиях реформирования уголовно-процессуального законодательства: Дисс. ... канд. юрид. наук, М., 2013, էջ 23:



այն գործողությունները, որոնք ձեռք են բերել դատավարական փաստաթղթի ձև, ստացել են դատավարական ակտ անվանումը<sup>1</sup>: Մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը այն դատավարական ակտն է, որն արտացոլում է մեղադրյալ ներգրավելու դատավարական ինստիտուտի էությունը:

Անձին որպես մեղադրյալ ներգրավելը դատավարական գործողություն է, որի հիման վրա վարույթն իրականացնող մարմինը կայացնում է համապատասխան դատավարական որոշում: Մինչև որոշման կայացումը այն ենթադրում է քննիչի կողմից որոշակի գործողությունների իրականացում: Քննիչը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությամբ հետազոտում է գործի հանգամանքները, դրանք հաստատող փաստական տվյալները, վերլուծում և ընտրում է այն նորմը, որը պետք է կիրառվի առաջացած քրեաիրավական հարաբերությունների համար: Անկասկած, մեղադրյալ ներգրավելու մասին պատճառաբանված որոշման կայացումը կազմում է իրավակիրառ գործունեության ավարտական մասը, որում քննիչն արտահայտում է իր գնահատականն անձի կողմից ենթադրյալ հանցագործություն կատարելու վերաբերյալ: Հետևաբար այն որպես դատավարական ակտ կամ որոշում, պետք է համապատասխանի քրեադատավարական օրենքով սահմանված պահանջներին, այսինքն՝ լինի օրինական, հիմնավոր և պատճառաբանված:

Քրեական հետապնդման մարմինն առաջին անգամ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշմամբ հաստատում է սկզբնական մեղադրանքը, որում պաշտոնապես ամրագրվում է որոշակի անձի կողմից՝ քրեական օրենքով նախատեսված ենթադրյալ հանցանքը կատարած լինելու փաստը: Իհարկե, այս հանգամանքը մեզ նաև հիմք է տալիս մեղադրյալ ներգրավելը սահմանազատել կասկածանքից, մասնավորապես՝ անձին ձերբակալելուց կամ նրա նկատմամբ խափանման միջոցներ կիրառելուց: Ճիշտ է, նշված գործողությունների կատարմամբ քրեական հետապնդում է հարուցվում անձի նկատմամբ, բայց դա մեղադրանքի ձևավորման համար նախնական բնույթի է<sup>2</sup>:

Անձին որպես մեղադրյալ ներգրավելը դատավարական ինքնուրույն ինստիտուտ է, այսինքն՝ իրավական նորմերի այնպիսի համակցություն, որոնք կարգավորում են որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը կայացնելուն և մեղադրանքն անմիջականորեն առաջադրելուն վերաբերող հասարակական միասեռ հարաբերությունները:

Նախաքննության և ամբողջ դատավարության համար որպես մեղադրյալ ներգրավելու որոշման կարևորությունն այն է, որ դրանով ձևավորվում են դատավարական հարաբերություններ քննիչի և մեղադրյալի միջև, ինչպես նաև մեղադրյալը դառնում է որոշակի իրավունքների և պարտականությունների կրող:

Որպես մեղադրյալ ներգրավելը քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով լիազոր սուբյեկտի կողմից կայացվող իշխանական բնույթի դա-

<sup>1</sup> Տե՛ս **Строгович М. С.** Курс советского уголовного процесса. Т. 1., М., 1968, էջ 200:

<sup>2</sup> ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի Նախագծում նույնպես հանդիպում ենք նման կարգավորման, որում, ճիշտ է, չկա «կասկածյալ» հասկացությունը, բայց նախատեսված է «ձերբակալված անձ» հասկացությունը, որն ըստ էության նույնանում է կասկածյալի հետ: Նախագծի ինքնատիպությունն այն է, որ քրեական հետապնդումը սկսվում է անձին որպես մեղադրյալ ներգրավելով, իսկ ձերբակալությունը համարվում է քրեական հետապնդման նախապատրաստություն, որտեղ անձի պաշտպանության իրավունքը երաշխավորված է:

տավարական ակտ է, որն արտացոլվում է որպես մեղադրյալ ներգրավելու մասին դատավարական որոշման մեջ: Մեղադրյալ ներգրավելը, որն արտահայտվում է դատավարական հատուկ ակտում, նախորդում է որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշմանը:

Քրեական դատավարությունում յուրաքանչյուր որոշում կայացնելուն նախորդում են համապատասխան հետազոտական գործողությունների կատարում, ապացուցման ենթակա հանգամանքների պարզում, դրանց իսկության հաստատում և որոշման ճիշտ ընտրություն: Դա վերաբերում է նաև մեղադրյալ ներգրավելու մասին որոշման կայացմանը, որովհետև այդ պահին քննիչը պետք է համոզված լինի, որ բոլոր ապացույցները հավաքվել, ստուգվել և գնահատվել են և բավարար են մեղադրանք առաջադրելու համար: Քննիչը քրեական գործի հետագա քննության ընթացքում պետք է հաշվի առնի մեղադրյալի փաստարկներն իրեն ներկայացված մեղադրանքի օրինականության և հիմնավորվածության վերաբերյալ:

Քննարկելով որպես մեղադրյալ ներգրավելու որոշմանը վերաբերող խնդիրները՝ պետք է անդրադառնալ դատավարական գրականության մեջ տարիներ շարունակ վեճի առարկա դարձած «մեղադրյալ ներգրավել» և «քրեական պատասխանատվության ենթարկել» հասկացությունների հարաբերակցությանը: Նշված վեճը գալիս է խորհրդային քրեական դատավարությունում տեղ գտած այն կարգավորումից, որի համաձայն՝ հանցագործության կատարման մեջ մեղադրանք առաջադրելու համար հինք տվող բավարար ապացույցների առկայության դեպքում քննիչը պատճառաբանված որոշում է կայացնում տվյալ անձին որպես մեղադրյալ պատասխանատվության ենթարկելու մասին (<ԽՍՀ քր. դատ. օր-ի հոդված 135 մաս 1): Իհարկե, քրեական դատավարության գործող օրենսգրքում քրեական պատասխանատվության ենթարկելու փոխարեն օգտագործվում է «որպես մեղադրյալ ներգրավել» հասկացությունը, մինչդեռ քրեական օրենսգրքում պահպանվել է նշված հասկացությունը: Այսպես, քրեական օրենսդրությունը պատասխանատվություն է նախատեսում ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Նշված հոդվածի համաձայն՝ հանցագործություն է համարվում անձին քրեական պատասխանատվության ենթարկելը չհաստատված հանցագործության դեպքով կամ առանց դեպքին անձի մասնակցությունը հիմնավորող կամ ոչ բավարար չափով հիմնավորող կամ առանց նրա արարքում հանցակազմը հավաստող փաստական տվյալների առկայության (<< քր. օր-ի հոդված 336): Նշված իրավական կարգավորումը հինք է տալիս ենթադրելու, որ այդ հասկացությունները քրեաիրավական և քրեադատավարական իմաստով նույնը չեն: Իհարկե ճիշտ կլիներ, որ այդ հասկացություններն իրավունքի երկու ճյուղերում էլ օգտագործվեին նույն բովանդակային նշանակությամբ, որովհետև երկու դեպքում էլ խոսքը մինչդատական վարույթում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին է: Նման կարգավորումը կապահովի քրեական դատավարությունում նշված ինստիտուտի կիրառման իրավական որոշակիության սկզբունքի իրացումը:

Քրեական դատավարության իրավունքի տեսության մեջ այս հիմնախնդիրն առավելապես քննարկվել է խորհրդային դատավարագետների կողմից, որոնց մեծ մասը պաշտպանում էր այն կարծիքը, որ քրեական դատավարությունում անձին որպես մեղադրյալ ներգրավելը քրեական պատասխանատվության ենթարկելու

կարևոր փուլերից է<sup>1</sup>: Չնայած օրենսդրական զարգացումներին՝ այսօր որոշ դատավարագետներ, պաշտպանելով վերը նշված մոտեցումը, գտնում են, որ մեղադրյալ ներգրավելն ունի երկակի նշանակություն՝ քրեաիրավական և քրեադատավարական<sup>2</sup>: Քրեաիրավական նշանակությունն այն է, որ անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման կայացումը և մեղադրանքի առաջադրումը անձին քրեական պատասխանատվության ենթարկելու սկզբնական պահն են: Քրեական իրավունքում քրեական պատասխանատվությունը դիտվում է որպես բարդ երևույթ, որն անցնում է որոշակի փուլեր: Ընդ որում, պոտենցիալ պատասխանատվությունն սկսվում է հանցանք կատարելու պահից, եթե ծագում է հանցագործության համար պատասխանատվության ենթարկելու պարտականությունը, իսկ իրական պատասխանատվությունն իրագործվում է դատարանի մեղադրական դատավճռով<sup>3</sup>: Նշված մոտեցումը հիմնավորվում է նաև նրանով, որ ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու սուբյեկտը քննիչն է<sup>4</sup>:

Նշված դատավարագետները որպես մեղադրյալ ներգրավելու դատավարական նախապայման առանձնացնում են քրեական հետապնդման մարմնի կողմից հանցագործության կատարման փաստի հաստատումը և մեղադրանքի առաջադրումը: Այսինքն՝ մեղադրանքի առաջադրմամբ առավել որոշակի է դառնում քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից որոշակի անձի նկատմամբ վարույթի իրականացումը և միաժամանակ ընդգծվում են քրեական հետապնդման սահմանները: Նշված մոտեցումը հիմնավորում է քրեական օրենսգրքում տեղ գտած այն կարգավորումը, որ ակնհայտ անմեղ անձին որպես մեղադրյալ ներգրավելը մեղադրյալին քրեական պատասխանատվության ենթարկելն է: Իհարկե, դժվար է համաձայնել այն մոտեցման հետ, որը հիմնավորում է քրեական և քրեական դատավարության օրենսգրքերում նշված հարցի տարբեր կարգավորման նպատակահարմարությունը, որովհետև այն հակասում է անմեղության կանխավարկածի, արդար դատական քննության, միայն դատարանի կողմից արդարադատություն իրականացնելու սկզբունքներին: Կարծում ենք՝ մեղադրյալ ներգրավելը նշանակում է, որ քրեական հետապնդում իրականացնող մարմինը բավարար ապացույցների հիման

<sup>1</sup> Ст'у Строгович М. С. Уголовный процесс. М., 1946, էջ 292, Карнеева Л. М. Привлечение к уголовной ответственности. Законность и обоснованность. М., 1971, էջ 154, Альперт С. А. Обвинение в советском уголовном процессе, Харьков, 1974, էջ 21, Фаткуллин Ф. Н., Зинатуллин З. З., Аврах Я. С. Обвинение и защита по уголовным делам, Казань, 1976, էջ 14, Ефимичев С. П. Привлечение к уголовной ответственности в качестве обвиняемого – этап стадии предварительного расследования. //Правоведение, 1985, N 5, էջ 30, Громов Н. А. Институт привлечения к уголовной ответственности. Саратов, 1991, էջ 85:

<sup>2</sup> Кальницкий В. В. Сущность и значение привлечение в качестве обвиняемого, //Законодательство и практика, Омск, 2006, N 2, էջ 16, Россинский С. Б. Уголовный процесс: Учебник, М., 2009, էջ 431, «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք»: Հատուկ մաս, Եր., 2012, էջ 897:

<sup>3</sup> Ст'у «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք»: Հատուկ մաս, Եր., 2012, էջ 897:

<sup>4</sup> Քրեական դատավարության նոր օրենսգրքի Նախագծի իրավական կարգավորման պայմաններում քրեական պատասխանատվության սուբյեկտ դառնում է միայն դատախազը, որովհետև որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում կայացվում է միայն դատախազի կողմից, իսկ մեղադրանքն առաջադրում է քննիչը: Իհարկե, նշված իրավական կարգավորման պայմաններում խնդիրներ է առաջացնում այն հարցը, որ այս կարևոր և պատասխանատու որոշումը կայացվելու է այն սուբյեկտի կողմից, որի վարույթում չէ քրեական գործը:

վրա անձին ներկայացնում է քրեաիրավական պահանջ և մեղսագրում նրան ենթադրյալ հանցագործության կատարումը, որը հետագայում դառնում է դատական քննության առարկա և լուծվում արդարադատության իրականացման միջոցով: Մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը հանցագործության կատարման մեջ անձին մեղավոր ճանաչելը չէ, որովհետև ըստ անմեղության կանխավարկածի. «Հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով» (<< քր. դատ. օր.-ի հոդված 18, մաս 1):

Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով այս հարցն ավելի հստակեցված է. մեղադրյալ ներգրավելը նույնացվում է քրեական հետապնդում հարուցելու հետ, իսկ քրեական օրենսգրքում պետք է պատասխանատվություն նախատեսել՝ արդեն ոչ թե ակնհայտ անմեղ մեղադրյալին քրեական պատասխանատվության, այլ քրեական հետապնդման ենթարկելու համար: Անձը ներգրավվում է որպես մեղադրյալ հետագայում նրան քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Պետք է համաձայնել Ի. Բ. Լապինի այն մոտեցման հետ, որ «քրեական հետապնդումը» ավելի բովանդակային հասկացություն է և համապատասխանում է դատավարության էությանը և նշանակում է մեղադրանքի կողմի դատավարական գործունեություն, որն ուղղված է հանցագործության կատարման մեջ մեղադրյալի ներկացմանը<sup>1</sup>:

Որպես մեղադրյալ ներգրավելու ինստիտուտի էությունն է պետության և մեղադրյալի միջև նախնական քրեաիրավական վեճի կանխորոշումը: Մեղադրյալ ներգրավելու միջոցով պետությունը անձի նկատմամբ ներկայացնում է քրեաիրավական պահանջ, որը հետագայում պետք է լուծվի արդարադատության միջոցով: Լյսինքն՝ մեղադրյալ ներգրավելու միջոցով պետության և մեղադրյալի միջև ծագում են օրենքով երաշխավորված փոխադարձ իրավունքներ ու պարտականություններ: Պետությունը՝ հանձնիս քրեական հետապնդում իրականացնող իր մարմինների և պաշտոնատար անձանց, իրավունք ունի քրեական հետապնդում հարուցել և սահմանափակել մեղադրյալի՝ օրենքով նախատեսված իրավունքներն ու ազատությունները, իսկ մեղադրյալը ձեռք է բերում իրավունքներ, որոնք հնարավորություն են տալիս նրան պաշտպանվելու ներկայացված մեղադրանքից: Մեղադրանքը քրեադատավարական այն ինստիտուտն է, որի միջոցով ապահովվում է հանրային քրեական հետապնդման կառուցակարգի գործունեությունը: Մեղադրանքը կոնկրետ հանցագործության հանգամանքների և այն կատարած անձի հետ հանցակազմը կապող դատավարական միջոց է, և այդ պատճառով այն կարելի է դիտել որպես արարքում հանցակազմի հատկանիշների առկայության դատավարական արտահայտություն, որից ածանցյալ է նաև քրեական արդարադատության իրականացման գործառույթը<sup>2</sup>:

Որպես մեղադրյալ ներգրավելու ինստիտուտի դատավարական նշանակությունը բավականին մեծ է քրեական գործով վարույթի հետագա ընթացքը կանխորոշելու համար: Վ. Պ. Բոժևը որպես մեղադրյալ ներգրավելու դատավարական ինստիտուտի նշանակությունը տեսնում է հետևյալում՝ 1) քրեական գործով մեղադրյալի՝

<sup>1</sup> Ст' u Лапин И. Б. Проблемы обеспечения законности и обоснованности привлечения лица в качестве обвиняемого: Дисс. ... канд. юрид. наук, М., 2007, էջ 54:

<sup>2</sup> «Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու», 2012, հ. 4, Եր., 2013, էջ 338:

որպես դատավարության սուբյեկտի ի հայտ գալը, որի նկատմամբ իրականացվում է նախաքննություն, 2) նախնական քննության փուլում երկու կարևոր սուբյեկտների՝ քննիչի և մեղադրյալի միջև համապատասխան հարաբերությունների ձևավորումը, 3) այդ պահին քննիչի կողմից քրեաիրավական հարաբերությունների առկայության հաստատումը, 4) անձին քրեական պատասխանատվության ենթարկելու սպառնալիքի մասին իրազեկելը<sup>1</sup>: Դատավարական այս ինստիտուտի նշանակության կարևորության մասին է վկայում այն փաստը, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում քրեական հետապնդման հարուցումը նույնացվում է անձին որպես մեղադրյալ ներգրավելու հետ և դարձել է դատախազի բացառիկ լիազորությունը:

Կարծում ենք, որ ելնելով քրեադատավարական օրենսդրության կարգավորումից՝ մեղադրյալ ներգրավելու ինստիտուտի նշանակությունը պետք է տեսնել հետևյալում:

**Առաջին**՝ քրեական գործի քննությանը որոշակի ուղղվածություն տալու, մեղադրանքի սահմանները ընդգծելու և այդ ուղղությամբ քննություն իրականացնելու մեջ: Կասկածանքը, որն առկա է անձին ձերբակալելիս կամ խափանման միջոց կիրառելիս՝ մեղադրյալ ներգրավելիս, վերանում է, և մենք գործ ունենք ենթադրյալ հանցավոր արարքի ապացուցվածության այլ մակարդակի հետ: Այս դեպքում ուրվագծվում են տվյալ անձի քրեական հետապնդման սահմանները ինչպես մինչդատական վարույթում, այնպես էլ դատական քննության համար:

**Երկրորդ**՝ քրեական գործի հարուցումից հետո անձին մեղադրյալ ներգրավելը նախնական քննության կարևոր մասն է: Քննիչը որոշման մեջ ներկայացնում է իր հետևությունը հանցագործության փաստի առկայության, տվյալ անձի կողմից այն կատարված լինելու հիմնավոր կասկածի մասին: Ավելին, Նախագծում քրեական հետապնդման հարուցումը, այսինքն՝ որպես մեղադրյալ ներգրավելը, կանխորոշում է նախաքննության ժամկետների հաշվարկումը, դրանով ազդարարվում է պաշտպանության գործառույթի իրացումը, ինչպես նաև մինչդատական վարույթում մրցակցության կիրառումը: Մեղադրյալը և պաշտպանը, ծանոթանալով մեղադրանքին, ձևավորում են իրենց դիրքորոշումը:

**Երրորդ**՝ անձին տրվում է մեղադրյալի կարգավիճակ, և երաշխավորվում է օրենքով նրան վերապահված իրավունքների և պարտականությունների իրականացումը: Քրեադատավարական օրենսդրությունը պետք է նախատեսի և երաշխավորի մեղադրյալի՝ միջազգային փաստաթղթերով նախատեսված հիմնական իրավունքների իրացումը:

**Չորրորդ**՝ անձին որպես մեղադրյալ ներգրավելով՝ վարույթն իրականացնող մարմինը հնարավորություն է ստանում մեղադրյալի նկատմամբ կիրառել դատավարական հարկադրանքի միջոցներ: Ի հարկե հիմնավոր են օրենքում տեղ գտած այն սահմանափակումները, համաձայն որոնց՝ դատավարական հարկադրանքի առանձին միջոցները պետք է կիրառվեն միայն մեղադրյալի նկատմամբ: Առանց հիմնավոր կասկածի սխալ կլիներ անձին երկարաժամկետ զրկել ազատությունից, մասնավորապես որպես խափանման միջոց կիրառել կալանք, գրավ և այլն:

Ռ. Գ. Սերդեչնայան որպես մեղադրյալ ներգրավելու ինստիտուտի նշանակությունը կարևորում է նրանով, որ վերջինս վարույթն իրականացնող մարմնի համար

<sup>1</sup> St' u **Божьев В. П.** Предъявление обвинения и допрос обвиняемого, //Уголовное право, 2001, N 2, էջ 57:

մեղադրյալի իրավունքների իրացումը ապահովելու, մեղադրանք առաջադրելուց հետո մեղադրյալին հարցաքննելու պարտավորություն է առաջացնում, որի ցուցմունքները ոչ միայն ապացույց են, այլև պաշտպանության միջոց: Իսկ հասարակական նշանակությունն արտահայտվում է նրանում, որ այն ունի կանխարգելիչ բնույթ. շատերին կարող է զերծ պահել հանցագործություններ կատարելուց<sup>1</sup>:

«Կասկածյալ» սուբյեկտի կարգավիճակի վերացմամբ, իհարկե, մեղադրյալի դատավարական վիճակի նշանակությունն ավելի է մեծանում: Նախագծում կասկածյալը որպես դատավարության սուբյեկտ վերացվել է, բայց դա բոլորովին էլ չի նշանակում, որ մեղադրյալը դատավարությունում հանդես է գալիս անմիջապես, որովհետև ըստ Նախագծի՝ անձը մինչև մեղադրյալի կարգավիճակ ձեռք բերելը համարվում է ձերբակալված անձ և օգտվում մեղադրյալի համար օրենքով նախատեսված բոլոր իրավունքներից: Իհարկե, քրեադատավարական հարաբերությունների ծագման պահին միշտ չէ, որ բավարար ապացույցներ են լինում անձին որպես մեղադրյալ անմիջապես ներգրավելու համար, բայց քրեական հետապնդման ենթարկված անձը պետք է ունենա որոշակի կարգավիճակ, որն անհրաժեշտ պայման է դատավարական հարաբերություններին մասնակցելու համար:

Կասկածյալը որպես սուբյեկտ հանդես է գալիս քրեական դատավարության սկզբնական մասում, այսինքն՝ երբ դեռ քննություն չի իրականացվել, բայց կան բավարար ապացույցներ, որոնք վկայում են հանցագործության կատարմանը նրա մասնակցության մասին, և այդ հանգամանքների ուժով նրա նկատմամբ հնարավոր է կիրառել ձերբակալում: Ճիշտ է, Նախագծում բացակայում է «կասկածյալ» հասկացությունը, բայց նրա բազմաթիվ հոդվածներում հանդիպում ենք «*հիմնավոր կասկած*» կամ «*ողջամիտ կասկած*» հասկացությունների: Այսպես, Նախագծի 108 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ձերբակալում կարող է կիրառվել՝ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած *հիմնավոր կասկածի* առկայության դեպքում:

Իրավացի է այն մոտեցումը, որ հանցանք կատարած լինելու կասկածանքի նվազագույն աստիճանն անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով անձին ձերբակալելն է, որի համար չի պահանջվում ապացուցվածության այնպիսի աստիճան, ինչպիսին պահանջվում է անձին որպես մեղադրյալ ներգրավելու կամ մեղքն ապացուցելու համար: Անձին որպես մեղադրյալ ներգրավելու դեպքում նույնպես կասկած կա, բայց այն արդեն դրսևորվում է բավարար փաստերի առկայությամբ: Անձը, որի նկատմամբ կան կասկածներ ենթադրյալ հանցագործությունը կատարելու վերաբերյալ, և որը դեռ չի ներգրավվել որպես մեղադրյալ, ըստ էության կասկածյալ է<sup>2</sup>: Մեղադրյալը, ի տարբերություն կասկածյալի, որպես դատավարության սուբյեկտ միշտ առկա է, իհարկե բացառությամբ այն դեպքերի, երբ հայտնի չէ ենթադրյալ հանցանք կատարած անձը:

Դատավարական գրականության մեջ կասկածյալի և մեղադրյալի դատավարական վիճակներն ընդհանրացվել են հետևյալ բնութագրական հատկանիշներով. 1) երկուսի նկատմամբ էլ քրեական գործով իրականացվում է քննություն, 2) ինչպես մեղադրյալի, այնպես էլ կասկածյալի նկատմամբ կիրառվում են դատավարական

<sup>1</sup> Տե՛ս **Сердечная Р. Г.** Привлечение в качестве обвиняемого и осуществление принципов уголовного процесса: Дис. ... канд. юрид. наук, Волгоград. 1991, էջ 30:

<sup>2</sup> Տե՛ս **Դիրանդյան Ս. Ա.** Ձերբակալված անձի իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանության ապահովման երաշխիքները ըստ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի / տե՛ս ՀՀ քրեական դատավարության նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2014, էջ 164-165:

հարկադրանքի միջոցներ, 3) կասկածյալը, ինչպես և մեղադրյալը նույն չափով շահագրգռված են քրեական գործի ելքով, 4) կասկածյալին, ինչպես մեղադրյալին, օրենքով վերապահված են դատավարական իրավունքներ, 5) կասկածյալի, ինչպես մեղադրյալի նկատմամբ տարածվում են քննիչի որոշումները, 6) կասկածյալն իրավունք ունի իմանալու, թե ինչի մեջ է կասկածվում այնպես, ինչպես մեղադրյալն իրավունք ունի տեղեկացվելու մեղադրանքի էության մասին, 7) կասկածյալի ցուցմունքներն անհիմն կասկածանքից պաշտպանվելու միջոց են, 8) կասկածյալը և մեղադրյալը պատասխանատվություն չեն կրում ցուցմունքներ չտալու կամ ակնհայտ սուտ ցուցմունք տալու համար<sup>1</sup>:

Այս հարցի կապակցությամբ առավել ուշագրավ է Ա. Կ. Ավերչենկոյի մոտեցումը, որում հեղինակն առաձնացնում է նշված սուբյեկտներին ինչպես ընդհանրացնող, այնպես էլ տարբերակող հատկանիշները: Այսպես, երկու սուբյեկտների համար ընդհանրացնող են հետևյալ հատկանիշները՝

1) նրանց դատավարական գործառույթի նույնությունը,

2) դատավարական գործառույթի իականացման եղանակը, որը դրսևորվում է սուբյեկտիվ իրավունքի իրականացմամբ (նրանց գործունեության հիմքում հիմնականում ընկած է իրավունքը, այլ ոչ թե պարտականությունը),

3) կասկածյալի բոլոր դատավարական իրավունքներն իրականացնում է մեղադրյալը, սակայն մեղադրյալի ոչ բոլոր իրավունքներն են բնութագրական կասկածյալին,

4) ընդհանուր է կանչելու, հարցաքննելու, դատավարական հարկադրանքի միջոցների կրառման, ինչպես նաև նրանց մասնակցությամբ իրականացվող դատավարական գործողությունների կարգը:

Տարբերակող հատկանիշներն են՝

1) կասկածյալը դատավարական գործունեության սուբյեկտ կարող է լինել միայն նախնական քննության փուլում, մինչդեռ մեղադրյալը՝ նաև դատական քննության փուլերում,

2) անձին որպես կասկածյալ դատավարության մեջ ներգրավելու միասնական փաստաթուղթ չի նախատեսվում,

3) կասկածյալի իրավունքների շրջանակն ավելի սահմանափակ է, քան մեղադրյալինը<sup>2</sup>:

Նշված համադրությունը կարևոր է, որովհետև հաճախ անհրաժեշտություն է առաջանում վերանայելու դատավարության սուբյեկտների կարգավիճակը կամ քրեական դատավարությունում նրանց գոյության անհրաժեշտությունը: Նախագծի հեղինակներն ավելորդ են համարում «կասկածյալ» սուբյեկտի անհրաժեշտությունը քրեական դատավարությունում, բայց չեն կարող հրաժարվել «ծերբակալված անձ» հասկացությունից:

Չնայած Նախագծով քրեական հետապնդումը հարուցվում է անձին որպես մեղադրյալ ներգրավելու պահից, սակայն առանձին հոդվածների վերլուծությունից հետևում է, որ ծերբակալվածն այն անձն է, որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում: Վարույթի հետագա ընթացքում ծերբակալված անձը դառնում է մեղադրյալ, և այդ կարգավիճակը պահպանվում է մինչև դատավճռի օրինական ու-

<sup>1</sup> Տե՛ս **Стремовский В. А.** Участники предварительного следствия в советском уголовном процессе, Ростов-н/Д., 1966, էջ 106:

<sup>2</sup> Տե՛ս **Аверченко А. К.** Подозреваемый и реализация его прав в уголовном процессе, Дис. ... канд. юрид. наук, Томск, 2001, էջ 72:

Ժի մեջ մտնելը: Քանի որ նրա նկատմամբ պետք է սկսվի քրեական հետապնդում, հետևաբար նա ի սկզբանե օժտված է դատավարական լայն իրավունքներով: Ավելին՝ Նախագծում ուղղակի սահմանված է, որ անմիջականորեն ծագած կասկածանքի հիմքով ձերբակալված անձը ձերբակալման որոշումը ստանալու պահից, իսկ եթե օրենքով սահմանված ժամկետում այն չի հանձնվել, ապա իրեն ազատությունից փաստացի զրկելուց հետո վեց ժամը լրանալու պահից ձեռք է բերում սույն օրենսգրքով մեղադրյալի համար նախատեսված բոլոր վերաբերելի իրավունքներն ու պարտականությունները (Նախագծի հոդված 110, մաս 1): Նշված կարգավորումը նորոյթ է մեր քրեական դատավարությունում, որովհետև քրեական դատավարության գործող օրենսդրությամբ չի կարգավորված այն հարցը, թե եթե կասկածյալի կարգավիճակում գտնվելու՝ օրենքով սահմանված ժամկետը լրացել է, իսկ տվյալ անձը որպես մեղադրյալ չի ներգրավվել, ինչպիսի կարգավիճակ ունի նա: Տվյալ դեպքում նշված անձը ոչ վկա է և ոչ էլ կասկածյալ կամ մեղադրյալ: Այս իրավական կարգավորման անորոշությունը էապես խոչընդոտում է անձի պաշտպանության իրավունքի իրացումը: Արդարացի է Է. Ֆ. Կուցովայի այն մոտեցումը, որ երբ անձը մեղադրանքի համար բավարար ապացույցների առկայության դեպքում համապատասխան որոշման կայացմամբ մեղադրյալ չի ճանաչվում, ապա նշված վիճակը պետք է գնահատել պաշտպանության իրավունքի խախտում<sup>1</sup>: Վերը նշվածը հիմք է տալիս ենթադրելու, որ Նախագծում իրավունքների և ազատությունների պաշտպանությանը վերաբերող «կասկածյալ» և «մեղադրյալ» հասկացությունների միջև որևէ տարբերություն չկա: Ճիշտ է, նշված ընդհանրական կարգավորմամբ պաշտպանության տեսանկյունից խնդիր չկա, բայց քրեական դատավարությունում հանդես եկող ցանկացած սուբյեկտ պետք է նախատեսված լինի դատավարության օրենսգրքով, որովհետև այն քրեական դատավարության սուբյեկտի բնութագրական հատկանիշներից է, հետևաբար արդարացված կլիներ Նախագծում ձերբակալված անձի դատավարական վիճակը կարգավորել առանձին հոդվածով:

<sup>1</sup> St' u **Куцова Э. Ф.** Гарантии прав личности в советском уголовном процессе (Предмет, цель, содержание), М., 1973, էջ 163:



## НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ИНСТИТУТА ПРИВЛЕЧЕНИЯ В КАЧЕСТВЕ ОБВИНЯЕМОГО

### **Самвел Дилбандян**

*Заведующий кафедрой уголовного процесса и криминалистики юридического факультета ЕГУ, доктор юридических наук, профессор (e-mail: iravdilbandyan@rambler.ru)*

### **Нарек Минасян**

*Инспектор отдела служебного расследования управления внутренней безопасности Полиции РА (e-mail: narek-mkrtchyan90@mail.ru)*

Институт привлечения в качестве обвиняемого всегда был в центре внимания процессуалистов, так как от статуса этого субъекта уголовного процесса зависит дальнейший ход дела. Суть привлечения в качестве обвиняемого – это предрешение изначального уголовно-правового конфликта между государством и обвиняемым. Государство путем привлечения лица в качестве обвиняемого предъявляет ему уголовно-правовое требование, которое должно быть разрешено в результате осуществления правосудия. Государство в лице органов и должностных лиц уголовного преследования уполномочено возбудить уголовное преследование и ограничить предусмотренные законом права и свободы обвиняемого. Обвиняемый же приобретает права, которые дают ему возможность защищаться от предъявленного обвинения. Обвинение это уголовно-процессуальный институт с помощью которого обеспечивается деятельность конструкции публично-уголовного преследования. При принятии решения о привлечении в качестве обвиняемого следователь должен быть убежден в том, что собраны, проверены и оценены достаточные для предъявления обвинения доказательства.

В условиях отказа от статуса подозреваемого увеличивается значение процессуального статуса обвиняемого. Проект нового УПК РА отказался от подозреваемого, как субъекта уголовного процесса, но это не значит что обвиняемый изначально появляется в уголовном процессе так как согласно проекту нового УПК РА до приобретения статуса обвиняемого лицо является задержанным. Конечно не всегда в начале возникновения уголовно-процессуальных отношений имеются достаточные доказательства для привлечения лица в качестве обвиняемого, но лицо, подвергнутое уголовному преследованию, должно иметь определенный статус как обязательное условие для участия в уголовно-процессуальных отношениях. В проекте нового УПК РА привлечение в качестве обвиняемого отождествлено с институтом возбуждения уголовного преследования.

## CERTAIN ISSUES OF THE INSTITUTE OF THE INVOLVEMENT OF A PERSON AS AN ACCUSED

### Samvel Dilbandyan

*Head of the YSU Chair of Criminal Proceedings and Criminalistics, Doctor of Law, Professor (e-mail: iravdilbandyan@rambler.ru)*

### Narek Minasyan

*Inspector of service investigation division of internal security department of police of the Republic of Armenia (e-mail: narek-mkrtychyan90@mail.ru)*

---

The institute of the involvement of a person as an accused have always been of great interest for the law specialists as the further course of the proceedings depends on the status of this subject of criminal procedure. The issues discussed within this article relates to the role of the institute of the accused, the correlation of the concepts of «the involvement of a person as an accused» and «subject to criminal liability», as well as reasonable suspicion. The article also analyzes new regulations in the Draft Criminal Procedure Code.

**Բանալի բառեր** - մեղադրյալ, մեղադրյալ ներգրավել, քրեական պատասխանատվության ենթարկել, կասկածյալ, հիմնավոր կասկած

**Ключевые слова** – обвиняемый, привлечение в качестве обвиняемого, привлечение к уголовной ответственности, подозреваемый, обоснованное сомнение

**Keywords** – the accused, the involvement of a person as an accused, subject to criminal liability, suspect, reasonable suspicion